ԵՐԵՄ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
YEREM VARDAZARYAN

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՀԱՐԱՎՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

20-21-րդ դարերի սահմանագծում նոր տիպի սպառազինությունների, միջազգային ու տարածաշրջանային հակամարտությունների առկայությունը թելադրում են անվտանգության համընդհանուր համակարգի ձևավորում:

Համընդհանուր անվտանգություն ասելով՝ պետք է նկատի ունենալ ռազմական հակամարտությունների, պատերազմների, ճգնաժամերի ու անկայունության սպառնալիքից համաշխարհային հանրության միջազգային փոխհարաբերությունների համակարգի պաշտպանվածությունը:

Միջազգային անվտանգությունը նախատեսում է տարբեր պետությունների, միավորումների, դաշինքների շահերի երաշխավորված պաշտպանվածությունը նրանց կենսագործունեության արդյունքում: Այն նվազեցնում է միջպետական հակամարտությունները և ապահովում աշխարհում ռազմական ու ռազմավարական կայունությունը, ինչպես նաև ընդլայնում է տարբեր պետությունների և ազգերի համագործակցությունը: Դրանից բխում է այն, որ միջազգային անվտանգությունը նախատեսում է առաջացող սպառնալիքների կանխման ու վերացման նպատակով միջազգային ռազմապաշտպանական, քաղաքական ու տեխնիկական ծրագրերի համադասված իրականացում: Այն նաև ներառում է լայնածավալ ահաբեկչական գործողությունների, բնական ու տեխնիկական աղետների, մահաբեր համաճարակների տարածման նախականխման կամ դրանց հետևանքների նվազեցման նպատակով ձեռնարկվող միջոցների համակարգ[1]:

20-րդ դարի 70-ական թվականների կեսերից և հատկապես 80-ական թվականների սկզբներին ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում ակտիվանում են տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հետազոտությունները[2]:

Ռուս հետազոտող Վ.Դերգաչովը ֆունկցիոնալ առումով տարածաշրջանները տարբերակում է՝ ըստ հետևյալ սկզբունքների՝

---

[1] Տե՛ս Ջոթանջյան Հ., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Վաշինգտոն-Երևան, 2004-2995, էջ181:

[2] Տե՛ս Бусыгина И., Политическая география формирование политической карты мира, М. Проспект, 2010,стр. 5:

1. Աշխարհաքաղաքական (գեոստրատեգիական) տարածաշրջան (կոլեկտիվ անվտանգությունը ապահովող մեկ միասնական ռազմաստրատեգիական համակարգում ընդգրկված պետությունների խումբ):

2. Վարչական շրջան (քաղաքական-վարչական կառուցվածքի միավոր, որի միջոցով կենտրոնական իշխանությունը իրականացնում է իր տարածաշրջանային քաղաքականությունը):

3. Տնտեսական տարածաշրջան (աշխատանքի միջազգային բաժանման արդյունքում որևէ արտադրության կազմակերպման ուղղությամբ մասնագիտացած շրջան);

4. Սոցիալ-մշակութային տարածաշրջան (երկարատև զարգացման ընթացքում սեփական քաղաքակրթական կոդը մշակած տարածքային ընդհանրություն)[3]:

Տարածաշրջանային մակարդակով միջազգային անվտանգությունը նախատեսում է տարածաշրջանային երկրների միջև համագործակցության մոդելների ձևավորում: Ներկայումս միջազգային հարաբերությունների զարգացման վրա էական ազդեցություն ունի անհամաչափ տնտեսական զարգացման և ռեսուրսների ոչ հավասար ապահովվածության արդյունքում ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը: Միջազգային անվտանգության առումով առավել մեծ նշանակություն ունեն համաեվրոպական, մերձավորարևելյան և ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային անվտանգությունները: Այս առումով ուսանելի է Եվրոպայի փորձը, որը 1996 թվականի դեկտեմբերի 4-ին «Եվրոպայի ռեգեոնալացման» մասին հռչակագիր ընդունեց, որի գլխավոր նպատակը տարածաշրջանային ինտեգրման խորացումն էր. նրա մեջ մտնում են եվրոպական ավելի քան 300 տարածքներ, որոնք վարչաքաղաքական տարբեր կառուցվածք ունեն և միավորում են ավելի քան 400 միլիոն բնակչություն[4]:

Աշխարհի երկրների մեծ մասը, տնտեսական և ռազմաքաղաքական բնագավառներում չկարողանալով մրցակցել զարգացած պետությունների հետ, փորձում է սեփական անվտանգության ապահովման այլընտրանքային ճանապարհ գտնել: Այս փորձերը հիմնականում հանգեցնում են զանգվածային ոչնչացման զենք ստեղծելու քայլերի, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են ստեղծված հավասարակշռության խախտմանը: Դրան նպաստում է նաև տարածքային բազմաթիվ չլուծված խնդիրների առկայությունը:

---

[3] Տե՛ս Дергачов В., Вардомский Л., Регониведие, М., ЮНИТИ-ДАМА, 2004, стр. 12:

[4] Տե՛ս Игнатов В., Бутов Б., Регионоведение (методология, политика, экономика, право), Ростов на Дону, 1998, стр. 14:

Բացի միջազգային անվտանգության համընդհանուր համակարգից՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը նախատեսում է միջազգային խաղաղության պահպանման տարածաշրջանային համակարգի ստեղծում: Կանոնադրությունը, ինչպես նշված է նրա 52-րդ հոդվածում, չի խոչընդոտում տարածաշրջանային համաձայնագրի կամ մարմինների գոյությունը՝ խաղաղության ու անվտանգության պահպանման այնպիսի հարցեր լուծելու համար, որոնք համապատասխանում են տարածաշրջանային գործողություններին: Այստեղից հետևում է, որ անվտանգության տարածաշրջանային համակարգերը անվտանգության հանաշխարհային համակարգի մի մասն են կազմում[5]:

Այսպիսով՝ տարածաշրջանային անվտանգություն ասելով՝ ընդունված է հասկանալ՝

1.Առանձին երկրի տարածքում գտնվող որևէ առանձին վարչական տարածքի անվտանգությունը: Այս դեպքում խոսքը պետության որոշակի տարածքի, այսինքն՝ ազգային անվտանգության մասին է:

2.Տնտեսական, աշխարհագրական, ազգային-մշակութային, կրոնական և այլ չափանշներով համախմբված տարածաշրջանի անվտանգությունը, որը միավորում է մի քանի պետություններ: Այստեղ խոսքը միջազգային անվտանգության մասին է[6]:

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասին, ապա չկարգավորված հայ-թուրքական, որոշ լարվածություն պահպանող ադրբեջան-իրանական, վրաց-ռուսական, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և ԼՂՀ-ի հիմնախնդիրների առկայությունը թույլ է տալիս արձանագրելու, որ այստեղ տարածաշրջանային անվտանգությունը գտնվում է անկայուն փուլում: Եվ հենց այս առումով քաղաքագետ Ռ.Գիրագոսյանը, գրում է, որ Վրաստանը Հարավային Կովկասի մյուս երկու երկրների համեմատությամբ ավելի արագ է շարժվում դեպի ՆԱՏՕ և Եվրամիություն: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա ավելի շատ «ընկալվում» է որպես միջինասիական և թուրքական պետություն: Վերոհիշյալ գործոններն և տարածքային չլուծված խնդիրները ՀՀ-ին մեկուսացնում են տարածաշրջանային գործընթացներից՝ նրան ավելի մղելով դեպի ՌԴ, դրանով իսկ էլ ավելի խորացնելով կախվածությունը ՌԴ-ից[7]:

Վրաստանը, մի շարք խնդիրներ ունենալով Ռուսաստանի հետ, ներկայումս լքել է ԱՊՀ-ի (Անկախ Պետությունների Համագործակցություն) շարքերը և

---

[5] Տե՛ս www.un.org/ru/documents/charter/chapter8shtml:

[6] Տե՛ս Явнучовская Р., Глобальная и региональная безопасность, М., РАГС, 2009, стр. 82:

[7] Տե՛ս Giragosyan. R The strategic importance of Central Asia and The South Caucasus.Regional studies course US army John.F.Kennedy special warfare center and school Bragg,NC December 2005,p.8

Ադրբեջանի հետ միասին ընդգրկված է ՎՈՒԱՄ-ի (Վրաստան-Ուկրաինա-Ադրբեջան-Մոլդովա) կառույցներում: Հայաստանն ընդգրկված է ՀԱՊԿ-ում (Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն):

Վրաստանի դիրքորոշումը ԼՂՀ-ի հարցում երկակի է: Հաշվի առնելով նրա լարված հարաբերությունները Ռուսաստանի հետ (որի ռազմավարական դաշնակիցը տարածաշրջանում Հայաստանն է), ինչպես նաև մի շարք այլ խնդիրներ ունենալով՝ Վրաստանը ծնական չեզոքություն է պահպանում՝ իրականում ավելի շատ ադրբեջանամետ դիրքորոշում ցուցաբերելով: Միևնույն ժամանակ հենց ԼՂՀ-ի խնդիրն էլ տնտեսական և քաղաքական առումով մեծացնում է Վրաստանի տարածաշրջանային նշանակությունը և նրան տարանցիկ երկրի վերածվելու հնարավորություն է տալիս (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (նավթամուղ), Բաքու-Թբիլիսի-Էրզրում(գազամուղ), կառուցվում է Կարս-Թբիլիսի երկաթուղին և այլն)[8]:

Սակայն 2008 թվականի հնգօրյա պատերազմից հետո թուլացան Վրաստանի տարածաշրջանային դիրքերը: Որպես տարանցիկ երկիր՝ նա հայտնվեց ռիսկային գոտում: Պատերազմի ընթացքում իրենց գործունեությունը դադարեցրին հաղորդակցության վերոնշյալ բոլոր ուղիները: Ղազախստանը հրաժարվեց Բաթումի քաղաքի մոտ նավթի վերամշակման գործարան կառուցելու իր մտադրությունից[9]: Պատերազմի արդյունքում Ադրբեջանի պետական և քաղաքական գործիչների մի մասը հակվեց դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ ու քաղաքական ճանապարհով լուծելու օգտին: Սակայն մեկուկես տարի անց, օգտվելով նավթի գների բարձրացումից, վերսկսեց ռազմական տեխնիկայի մասշտաբային գնումները: Հայաստանը ևս հավասարակշռությունը պահպանելու համար ստիպված էր Ռուսաստանից նոր սպառազինություններ ներմուծելու:

Հայաստանի և Ադրբեջանի միջև սպառազինությունների մրցավազքն այսօր թևակոխել է նոր փուլ, որի առանձնահատկությունն այն է, որ շեշտը դրվում է ոչ թե դրանց ներմուծման, այլ հայրենական ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման վրա: Ադրբեջանում արդեն սկսվել է սեփական ինքնաձիգի (AK-74M) արտադրությունը, և Թուրքիայի հետ համաձայնության են եկել 105մմ տրամագծի հետևակային հրացաններ, հրանոթներ և 120մմ տրամագծի ականանետի համատեղ արտադրության վերաբերյալ: Բաքվում

---

[8] Տե՛ս Минасян С., Нагорный Карабах после двух десятулетий конфликта: неизбежная пролонгация статус-кво? Аналитические доклады Института Кавказа Н. 2, август 2010, стр. 37:

[9] Տե՛ս Гаджиев И., Кавказский узел в геополитических приоритетах России, М., 2010, стр. 364:

նախատեսում են արտադրել նաև հակատանկային կառավարվող հրթիռներ: Հայաստանն իր հերթին ընդունեց ռազմական տեխնիկայի ու սպառազինությունների զարգացման 2011-2015 թվականների ծրագիրը, որով նախատեսում է ոչ միայն ներկրել արդիական զինատեսակներ, այլև ստեղծել հայ-ռուսական համատեղ 9 ձեռնարկություններ, որտեղ, զինամթերքից բացի, պետք է արտադրվի նաև ռազմական ծանր տեխնիկա[10]: Ներկայումս Վրաստանը փաստացի չի մասնակցում սպառազինությունների տարածաշրջանային մրցավազքին և բյուջեի առկա միջոցները հատկացնում է սոցիալ-տնտեսական ընթացիկ խնդիրների լուծմանը[11]:

Այսպիսով՝ տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից Հարավային Կովկասում ակնհայտ սպառազինությունների մրցավազքը խոսում է նաև այն մասին, որ մեր տարածաշրջանում զգալիորեն վտանգված է անվտանգությունը:

Երկար քննարկումներից հետո 2007 թվականի փետրվարի 7-ին Հայաստանի նախագահը հաստատեց Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, որի չորրորդ, այսինքն՝ արտաքին անվտանգության ռազմավարության գլխի երրորդ, տարածաշրջանային բաժնում նշված է, որ Հայաստանը մշտապես հանդես է գալիս տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, հարևան պետությունների միջև կառուցողական հարաբերությունների հաստատման օգտին: Տարածաշրջանում առկա են չկարգավորված հակամարտություններ, տարածայնություններ հարևանների հետ: Չեն ձևավորվել կայունության, անվտանգության, հաղորդակցության ուղիների և տնտեսական համագործակցության համընդհանուր ու միասնական համակարգեր[12]:

Հայաստանի անվտանգության ապահովման տարածաշրջանային ռազմավարությունը նպատակաուղղված է՝

- Տարածաշրջանային կայունության ամրապնդումը, երկկողմ և բազմակողմ փոխշահավետ համագործակցության զարգացմանն ու ծավալմանը:
- Վրաստանի և Իրանի հետ բարեդրացիական հարաբերությունների հետագա զարգացմանը և համագործակցության բազմաբնույթ ծրագրերի իրագործմանը:

---

[10] Տե՛ս Аргументы недели, 31 августа 2011, http://www. Argumenti.ru/world/n304/122672:

[11] Տե՛ս Кавказ-2009, Ежегодник Института Кавказа, Е., 2011, стр.125:

[12] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» սազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2(48), Ե., 2006, էջ 40-41:

• Ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծմանը, Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանը:

• Տարածաշրջանում ժողովրդավարական արժեքների տարածմանն ու առավել խորացմանը:

• Տարածաշրջանում իրականացվող միջազգային տնտեսական ծրագրերին Հայաստանի մասնակցության ապահովմանը[13]:

Այս տեսանկյունից արժե հիշատակել, որ 2006 թվականի նոյեմբերին Հարավային Կովկասի եռեք երկրները ԵՄ-ի հետ ստորագրեցին եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիրը, որով Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը հանձն առան մարդու իրավունքների, արդարադատության, ներդրումային բարենպաստ պայմաններ ստեղծել, վարչարարության, էներգետիկ ու տարածաշրջանային համագործակցության ոլորտներում ԵՄ-ի հետ համագործակցել և գրանցել որոշակի առաջընթաց[14]: Եվրոպական հարևանության քաղաքականությունը Հայաստանի համար կարևոր է ոչ միայն տնտեսական ու պաշտպանական անվտանգության տեսանկյունից, այլ նաև հայեցակարգային առումով: Այն միտված է ինտեգրման գործընթացների կայունացմանն ու փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը երկկողմ և տարածաշրջանային ձևաչափերով, ինչը ենթադրում է Հարավային Կովկասում գոյություն ունեցող և հատկապես երկու կողմից շրջափակման մեջ առնված Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրների լուծումը[15]:

Հարկ է նկատի ունենալ, որ Հայաստանի անվտանգության հիմնական գործոնները ներկայումս գտնվում են եվրոպական ազդեցության գոտում: Դրանք են ԼՂ հակամարտության լուծումը ԵԱՀԿ շրջանակներում, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, սահմանների բացման ու Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավորությունը՝ որպես Եվրամիությանը անդամակցելու ձգտող Թուրքիային ներկայացված ցանկություն-առաջարկություն[16]:

Գլոբալացման գործընթացը կանխատեսում է ներդրումային ու ֆինանսական գործունեության, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում, մաքսային ռեժիմների համակարգում, ընդհանուր էներգետիկ համակար-

---

[13] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն,Ե.,2007,էջ 41:

[14] Տե՛ս The European Union and Security Sector Reform Edited By David Spence and Philipp Fluri Published by John Harper Publishing, London, 2008, p 209:

[15] Տե՛ս Քոթանջյան Հ., Հակամարտուէյան էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականություն և ազգային անվտանգության հիմունքներ, ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Ե., 2010, էջ 710:

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 711:

գերի ստեղծում, որը պետք է ամրապնդվի հումանիտար փոխհամաձայնությամբ: Հակամարտող բոլոր կողմերը միջազգային հանրությանը վստահեցնում են, որ պատրաստ են ծառացած խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու, սակայն վերսկսած սպառազինությունների մրցավազքը, ռուս-ամերիկյան կրկին թափ առնող մրցակցությունը (ռուսական կայանները Աբխազիայում ու Օսեթիայում, ինչպես նաև ամերիկյան ռազմական ներկայության մեծացումը Սև ծովում), Իրանի մեկուսացումը և փակ սահմանները պայթյունավտանգ են դարձնում տարածաշրջանային անվտանգությունը:

Այսպիսով՝ վերը շարադրվածից պարզ է դառնում, որ Հարավային Կովկասը շարունակվում է բնութագրվել որպես իրական և պոտենցիալ էթնիկ, տարածքային, կրոնական և այլ հակասություններով ու հակամարտություններով լի մի տարածաշրջան, որոնք էլ որոշում են անդրկովկասյան երեք երկրների արտաքին քաղաքական ռազմավարությունը և առաջնությունները: Ընդ որում՝ թվարկված երկրներին ավելացել են երեք դեռևս լրիվ ճանաչում չստացած, սակայն իրենց անկախությունը հռչակած երկրներ, որոնք էական ազդեցություն են թողնում տարածաշրջանային անվտանգության վրա: Տարածաշրջանային անվտանգության համակարգը կարող է գործել միայն այն ժամանակ, երբ կողմերը գնան փոխզիջման, ստեղծվի ուժերի հավասարակշռության մեխանիզմ, որը վերահսկելի կլինի շահագրգիռ բոլոր կողմերի համար:

The role of regional security system(example of South Caucasus)

The paper covers some of the pecularities of the contemporary developments of systems of regional and international security.

The South Caucasus is described as a region with a number of actual and potential controversies of ethnic,regional,religious character.These controversies are bound to define the foreign political strategy and prior importance of the three countries in the South Caucasus.Some countries which have recently declared their independence,but not recognized as independent yet,have an essential impact on the security of the region.

Regional security system will act only in case the two sides make concessions,thus a mechanism developing of power balance,which will be likely to be monitored by all interested parties involved.